Ծրագիրը իրականացվում է «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից:

Ծրագիրը ֆինանսավորվում է Իտալական Կարիտասի և Հայաստանում Իտալիայի դեսպանատան կողմից

Ծրագրային վայրերը

«Հայկական Կարիտաս»-ի
Երևանի գրասենյակ
Հասցե՝ Արաբկիրի 38,տուն 2 "Ա"
Հեռախոս (+3741) 26-20-34
26-63-11
էլ. փոստ caryl@web.am

# Թրաֆիքինգ

## Մարդկանց վաճառք

Ապօրինի միգրացիայից դեպի ստրկություն՝ մեկ քայլ է

# Խորհուրդներ արտասահման մեկնողներին

- Ոչ-ոքի մի վստահեք ձեր անձնագիրը: Ձեր անձը հաստատող փաստաթղթերը միշտ պետք է գտնվեն միայն ձեզ մոտ:
- Եթե դուք պատրաստվում եք աշխատել կամ սովորել արտասահմանյան երկրում, հոգացեք այն մասին, որպեսզի ձեր պայմանագիրը ձեզ հասկանալի լեզվով լինի կազմված և որպեսզի ձեր ապագա աշխատանքի (ուսուցման) պայմանները, տեղը և ժամանակը հստակ ձևակերպված լինեն:
- Թողեք տանը, ձեր ընկերներին մանրամասն տեղեկություններ արտասահմանում ձեր կանգ առած վայրի մասին, հասցեով և հեռախոսահամարներով, ինչպես նաև ձեր անձնագրի և պայմանագրի կրկնօրինակները: Ցանկալի է թողնել նաև ձեր լուսանկարը և ձեր օտարերկրյա ընկերների հասցեները:
- Չմոռանաք տեղեկանալ արտասահմանում հայկական դեսպանատների և հյուպատոսական ներկայացուցչությունների հեռախոսահամարներին: Եթե դուք դժվար իրավիճակում եք հայտնվել կամ ձեզ ինչ-որ մեկը սպառնում է, դիմեք Հայաստանի, իսկ Թուրքիայում Ռուսաստանի ներկայացուցիչների, որոնք կօգնեն ձեզ:
- Արտասահմանյան երկրներում ակտիվորեն աշխատում են ոչ-կառավարական կազմակերպություններ և ծառայություններ, որոնք ծանր իրավիճակում հայտնված մարդկանց օգնության են հասնում:
- Օտարերկրյա պետության տերիտորիայում ձեր գտնվելու ժամկետը նշված է ձեր վիզայում: Վիզային ռեժիմի խախտումը անհնար կդարձնի արտասահման մեկնելու ձեր հաջորդ փորձը:
- Մի մոռացեք, որ օտար լեզվի թեկուզ տարրական բառերի իմացությունը զգալիորեն կթեթևացնի արտասահմանում ձեր գտնվելը և ծանր րոպեին կփրկի ձեզ:

# Պոտենցիալ զոհերին հավաքագրելու հիմնական ձևերն են

- Ծանոթների, պատահական մարդկանց
- Արտասահմանում աշխատանքի տեղավորվելու հայտարարությունների
- Տուրիստական գործակալությունների
- Ամուսնական հայտարարությունների
- Ինտերնետում տեղավորված հայտարարությունների միջոցով

Հիմնականում կանանց արտահանում են Թուրքիա, Հունաստան, Կիպրոս, Իտալիա, Իսպանիա, Հարավսլավիա, Բոսնիա և Հերցեգովինա, Հունգարիա, Չեխիա, Խորվաթիա, Գերմանիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Սիրիա, Չինաստան, Նիդերլանդներ, Կանադա, Ճապոնիա:

Սոցիալական կանխարգելման սխալ ստերեոտիպերից է մարդկանց վաճառքի խնդիրը միայն երիտասարդ կանանց սեռական շահագործման նպատակով վաճառքի խնդրի հետ նույնացումը: Սակայն մարդկանց վաճառքը իրականացվում է ոչ միայն մարմնավաճառության կազմակերպման նպատակով, այլև

- Բռնի կերպով երեխաներ ծննդաբերելու
- Բռնի ամուսնության
- Օրգանների փոխպատվաստման
- Ոչ օրինական ձեռնարկություններում և տանը ստրկական աշխատանքի և այլ նպատակներով

Հետևաբար, վաճառքի առարկա կարող են դառնալ ցանկացած տարիքի կանայք, տղամարդիկ, երեխաներ: